«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱԿԱՆԱՁԵՐԾՄԱՆ
ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ

„CENTER FOR HUMANITARIAN
DEMINING AND EXPERTISE"
SNCO

«23» 09 2019թ. № 94

«Մ-Բի-Ռ» ՍՊԸ-Ի
տնօրեն Վ. Բաղդասարյանին

Հարգելի պարոն Բաղդասարյան

Համաձայն «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև փոխադրամիջոցների առանձին մասերին առնչվող պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման համար 2019 թվականի մարտի 22-ին կնքված թիվ ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1 պայմանագրի(այսուհետ՝ Պայմանագրի) հավելված 1.1-ի, ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է Պատվիրատուի կողմից ներկայացված հայտում նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան ՏՍ կայան և անմիջապես իրականացնել ախտորոշման, անհրաժեշտ քանդման, ապամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:

2019թ. հուլիսի 29-ին Պատվիրատուն պայմանագրի համաձայն Կատարողին է ներկայացրել անհրաժեշտ ծառայությունների մատուցման հայտ: Կատարողի կողմից հայտում նշված ժամկետում անհրաժեշտ վերանորոգման ծառայությունները չեն մատուցվել: Պայմանագրի 7.8 կետի համաձայն Պատվիրատուի հայտով ներկայացված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, սակայն Կատարողը մինչ օրս պայմանագրով սահմանված ծառությունները չի իրականացրել, խախտելով պայմանագրի դրույթները:

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 բ) ենթակետը Պատվիրատուն 2019թ. սեպտեմբերի 24-ից լուծում է 2019 թվականի մարտի 22-ին կնքված թիվ ՀԱՓԿ-ԳՀԾՁԲ-19/03-1 ծածկագրով պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն պարտավորվում է սուն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքումՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900018002254 հաշվեհամարին փոխանցել 480 000 (չորս հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գնի 10%-ի չափով):

Գործուն. հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան (Լենինականի) 9/1, 0054, Հեռ. 374 60 518789 էլ-փոստ. info@chde.am, Վեբ կայք. www.chde.am
Hasratyan (Leninakani) 9/1, Yerevan, Republic of Armenia, 0054, Tel: 374 60 518789 E-mail: info@chde.am, Web site: www.chde.am

/ ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏԼՕՐԵՆ Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գործուն. հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հասրաթյան (Լենինականի) 9/1, 0054, Հեռ. 374 60 518789 էլ-փոստ. info@chde.am, Վեբ կայք. www.chde.am
Hasratyan (Leninakani) 9/1, Yerevan, Republic of Armenia, 0054, Tel: 374 60 518789 E-mail: info@chde.am, Web site: www.chde.am